ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

29 մայիսի 2023 թվականի N 01-Լ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԻՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով 2020 թվականի մարտի 25-ի ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի անցումային դրույթները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հունիսի 12-ի «Բարձրագույն դատական խորհրդի անդամների և Սահմանադրական դատարանի դատավորների հայտարարագրերի վերլուծության իրականացումը Հանձնաժողովի անդամներին լիազորելու և դատավորների հայտարարագրերի վերլուծության հերթականությունը սահմանելու մասին» N 01-Լ և Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» N 02-Լ որոշումները, Հանձնաժողովը ***որոշում է.***

1. Որպես հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանել Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 19-ի N 02-Լ որոշման հավելվածով սահմանված բոլոր այն պաշտոնատար անձանց (այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների) 2022 թվականի հայտարարագրերը, ում 2021 թվականի տարեկան հայտարարարագրի վերլուծության արդյունքում վեր են հանվել այնպիսի անհամապատասխանություններ, որոնց արժանահավատությունն ու ամբողջականությունը ստուգելու նպատակով պահանջվում է ըստ տարիների հայտարարագրված տվյալների համադրություն:

2. Որպես հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանել բոլոր այն դատավորների (այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների) 2022 թվականի հայտարարագրերը, ում հայտարարարագրերի վերլուծության արդյունքում վեր են հանվել այնպիսի անհամապատասխանություններ, որոնց արժանահավատությունն ու ամբողջականությունը ստուգելու նպատակով պահանջվում է ըստ տարիների հայտարարագրված տվյալների համադրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ք. Երևան